

Ռաբիա

«Եթե օձը լիներ արգելված, Ադամը նրան էլ կուտեր», Մարկ Տվեն: Արգելքները այն դրդապատճառներն են, որոնք ստիպում են մեզ անել այն, ինչը հարբածի մտքին է: Օրենքն ասես փոխվել է. Մեզ թույլատրելի է միայն մեր այգու խնձորը...

Շոկոլադի քաղաք Ժնև, շվեյցարական դրախտ, որտեղ ժամացույցները իրավունք չունեն կանգնելու: Դավիթը իրեն գամել էր Ժնևյան համալսարանի առջև ու, անհավատալի զգացողություններից լալկված, չէր կարողանում մոտենալ դռանը: Հայի՝ հպարտորեն հոսող արյունը տաքացնում էր նրա երակները: Քամին խաղում էր նրա մազերի հետ, իսկ արևն ասես չէր ճանաչում նրան ու շենքի խորքից մերթընդմերթ երևացնում էր դեմքը: 2025 թվականն էր: Դավիթը լավագույն ուսանողների շարքում փոխանակման ծրագրով Հայաստանից մեկնել էր ուսանելու Շվեյցարիայում: Եվ ահա կանգնած համալսարանի առաջ՝ չէր հավատում, որ սովորելու է այնտեղ: Շենքը Դավիթին հիշեցնում էր գերբնական ընդունակություններով երիտասարդների դպրոցի: Նա մեծ երևակայության տեր պատանի էր, և հաճախ էր մտքերով գնում հեռու, պատկերացնում՝ ինչպես է մի օր օժտվում գերբնական ուժով, ձեռքերով կրակ արձակում, թռչում շենքերի վրայով: Եվ հիմա համալսարանի շենքից ներս նա պատկերացնում էր օդով թռչող, աչքերով իրեր տեղափոխող, անհետանալու ընդունակություն ունեցող ուսանողներին:

-Դեյվ, ուշանում ենք, դեռ երկա՞ր ես կանգնելու այսպես, - հեռվից հայտնվեց Դավիթի չինացի նոր ընկերը՝ Լինգը, ում հետ տեղավորվել էր ուսանողական հանրակացարանում, ընկերաբար հրեց նրան մեջքից և վազեց առաջ: Երբեմն օգտագործելով ամերիկացի թինեյջերների արտահայտություններ՝ Լինգը խոսում էր աղավաղված անգլերենով, և հաճախ Դավիթը ստիպում էր, որ կրկնի ասածը: Լինգը նման չէր փոքրամարմին չինացիներին, նա բավական հմայիչ տեսք ուներ, և գիտեր դրա մասին, ինչը նրան ավելի էր ձգում դեպի իգական սեռը: Նրանց հետ նույն սենյակում ապրում էր Ռուսաստանից եկած Սաշան, ում հետ թեպետ հեշտ էր հաղորդակցվելը, քանի որ Դավիթը շատ լավ տիրապետում էր ռուսերենին, բայց Սաշան բարդ

բնավորություն ուներ, երբեմն գոռոզանում էր, պնդում իր կարծիքը, իսկ երբեմն էլ ընդհանրապես չէր ցանկանում մասնակցել զրույցներին:

-Ինչքա՞ն ասես, որ իմ անունը Դավիթ է, Դավիթ, - գլուխը դժգոհ շարժեց Դավիթը ու գնաց Լինգի հետևից:

Դռնից ներս ամեն ինչ այնպես չէր, ինչպես պատկերացնում էր Դավիթը, ուսանողները չէին թռչում, չէին անհետանում, իրերը չէին շարժվում օդով, ու թեպետ Դավիթը գիտեր, որ նման բաներ չի տեսնելու, բայց ենթագիտակցորեն փոքր-ինչ մոռալվեց: Նրանք Լինգի հետ մտան մի մեծ լսարան, որի նստատեղերը բարձրից իջնում էին ցած ու ծայրի մասերում կորանում: Նրանք տեղավորվեցին մեջտեղի հատվածում ու սկսեցին ուսումնասիրել ուսանողներին:

-Դեյվ, չեմ հավատում, որ այսքան գեղեցիկ աղջիկներ կան մեր կողքին, - ոգևորված ասաց Լինգը:

-Եթե դու մի անգամ էլ ինձ Դեյվ ասես, գնալու ես հետևի շարք, սովորի՛ր վերջապես, Դավիթ, - գրեթե շշուկով, բայց լարված ասաց Դավիթը:

-Օճ, Դավիթ, ասում եմ ի՛նչ դրախտ ենք ընկել, - ժպիտը դեմքին դաջած՝ ասես ինքն իրեն խոսում էր Լինգը:

-Չգիտեմ, ես արտասահմանցի աղջիկներով այդքան էլ չեմ հետաքրքրվում:

-Ի՞նչ ես ասում, ազգությունը ի՞նչ կապ ունի, եթե գեղեցիկ է, - ասաց Լինգը՝ ժպտալով փոքր-ինչ հեռվում նստած շիկահերին, - ահա խնդրեմ, տե՛ս ինչ սիրուն է:

-Լինգ, դանդաղ խոսիր, ես դեռ չեմ սովորել քո խոսելաձևին:

-Ասում եմ աչքերդ լայն բաց Դեյվ... sorry, Դավիթ: Գեղեցկությունը պետք է գնահատել, նայի՛ր այն աղջկան՝ belle femme:

-Մեր երկրում ամեն ինչ այլ է: Մեզ ասես ծրագրավորած լինեն, որ պետք է ամուսնանանք միայն հայ աղջկա հետ:

-Իսկ ո՞վ է խոսում ամուսնությունից:

-Դու անուղղելի ես Լինգ, - գլուխը շրջելով՝ ասաց Դավիթը և հայացքը հառեց ներքևի շարքում նստած անընդհատ ժպտացող համակուրսեցի աղջկան, ով ընկերուհուն ոգևորված ինչ-որ բան էր պատմում: Նա փոքրամարմին էր, մուգ մազեր և կլոր աչքեր

ուներ, այնքան կլոր, որ Դավիթը պտտվում էր նրանց առանցքի շուրջ: Նա գեղեցիկ էր, նույնիսկ չափազանց, բայց հայացքի խստությունը հասնում էր մինչև վերջին շարքերը: Դավիթը փորձում էր կարդալ աղջկա շուրթերը, մտքում տպագրում էր նրա ամեն մի շարժումը:

-Bro, իսկ դու լավ էլ արագ ես սովորում, տեսնում եմ՝ ճիշտ ուղու վրա ես, - ծիծաղով ասաց Լինգը:

-Վերջացրո՛ւ, Լինգ, - կարծես ամաչելով արտաբերեց Դավիթը, - նա պարզապես հետաքրքիր անձնավորություն է երևում:

-Իսկ դա մենք կպարզենք հենց հիմա, - տեղից վեր կացավ Լինգը:

-Ի՞նչ ես անում, գժվե՞լ ես, նստի՛ր, խնդրում եմ, - զայրացած ասաց Դավիթը:

-Դու այդպես ոչինչի չես հասնի, եթե նա քեզ հետաքրքրել է, պետք է ծանոթանաս չէ՞:

-Ո՛չ, Լինգ, վերջացրո՛ւ, ես չեմ ուզում ծանոթանալ:

-Է՛հ, եղբայր, դե այդպես էլ հեռվից նայիր:

Լսարանի դուռը աղմուկով փակվեց, և արագ քայլերով ներս մտավ փոքր-ինչ գեր, սպիտակը գերակշռող մազերով ու դեմքի արտահայտությունը ստիպողաբար խիստ, մոտ վաթսունամյա դասախոսը և, պայուսակը անտարբեր գցելով սեղանին, միանգամից սկսեց խոսել:

-Ողջունում եմ ձեզ և շնորհավորում Ժնևի համալսարան ընդունվելու կապակցությամբ: Մեր համալսարանը համարվում է Եվրոպայի առաջատար համալսարաններից մեկը, որին անվանում են նաև գլոբալիզացիայի համալսարան, քանի որ մենք չենք ճանաչում ազգությունների խտրականություն, և մեզ մոտ կարող են սովորել ցանկացած ազգության ուսանողներ: Այստեղ դուք ստանալու եք միջազգային ստանդարտներին համապատասխան կրթություն, որը ձեզ համար լայն դռներ է բացելու աշխարհի տարբեր երկրներում...

-Պարոն Պարկերն է, այստեղի հզոր դեմքերից է, ասում են շատ խիստ է վերաբերվում տարբեր ազգությամբ ուսանողների ընդհարումներին, խոսում են, որ անգամ իր նախաձեռնությամբ մի ուսանող է հեռացվել համալսարանից... - շշուկով ասում էր

Լինգը, իսկ Դավիթը ոչ նրան էլ լսում և ոչ էլ պարոն Պարկերին: Նրա միտքը ներքևի շարքում էր, թեպետ Լինգից ամաչելով չէր նայում աղջկան:

Դասախոսությունից հետո, օգտվելով Լինգի՝ լսարանից դասի ընթացքում փախչելու փաստից, Դավիթը շարժվեց աղջկա հետևից, այնպես պահված քայլերով, որ անգամ ինքն իրեն չնկատի, բայց միջանցքում ուսանողների ամբոխի պատճառով կորցրեց նրան:

Համալսարանի սրահներից մեկում նկարների ցուցահանդես էր կազմակերպվել, ուսանողները ներկայացրել էին իրենց աշխատանքները: Դավիթը մտավ սրահ ու առանձնապես ոչ շատ հետաքրքրությամբ սկսեց ուսումնասիրել նկարները, որոնք հիշեցնում էին գրադարանում պահված հազվադեպ կարդացվող գրքեր՝ տարիների փոշի հավաքած ու մարդկանց չսպասող: Նրա ուշադրությունը գրավեց սրահի ծայրում փակցված մի ծովային նկար, որում ամպամած երկնքի տակ ալիքը լպստում էր ինքն իրեն:

-Հետաքրքիր է, այդպես չէ՞, չես հասկանում երկինքն է զայրացած, թե ալիքը, - լսվեց հետևում կանգնած աղջկա ցածր ձայնը:

Կիսաթեք շրջվելով՝ Դավիթը տեսավ իր համակուրսեցուն:

-Հետաքրքիր է, - դանդաղորեն արտաբերեց նա:

-Սիրո՞ւմ եք նկարներ, - հարցրեց աղջիկը:

-Այո, - ասաց Դավիթը՝ չհասկանալով իսկապես սիրում է, թե պարզապես ցանկանում էր դրական պատասխան տալ:

-Այս նկարը ձգողականություն ունի, նկարիչը կարողացել է ճիշտ ներկայացնել երկնքի և երկրի միասնությունը, - շարունակեց աղջիկը, իսկ Դավիթը ասես չէր լսում նրան, ուսումնասիրում էր նրա դիմագծերը, - ես ավելի շատ դիմանկարներ եմ սիրում, կցանկանա՞ք տեսնել իմ նկարներից:

-Այո, անշուշտ, - սկսեց ակտիվանալ Դավիթը: Եվ նրանք շարժվեցին սրահի մյուս հատվածը և կանգնեցին մի տղամարդու դիմանկարի առջև, ում աչքերից խորը խստություն էր փչում, ասես պատրաստվում է խրատ տալ:

-Հայրս է, մինչև հիմա չի կարողանում համակերպվել, որ ես Շվեյցարիայում եմ և քայլում եմ փողոցներով առանց գլխաշոր: Եթե չլինեին մորս իրատես համոզմունքները, ես մեր դռնից այն կողմ ոչինչ չէի տեսնի:

Գլխաշոր բառից Դավիթը արագորեն նայեց նկարի ստորագրությանը՝ «Ռաբիա Քարաջա»:

-Անունս Ռաբիա է, գարուն է նշանակում, ես Թուրքիայից եմ, - ժպտալով ասաց աղջիկը՝ ասես ակնկալելով Դավիթի մասնակցությունը: Իսկ Դավիթն արդեն տեղափոխվել էր իր պապի գյուղը, հիշում էր այն պատմությունները, որ պապը լսել էր իր հորից: Քարաջա ազգանունը մի քանի բուլղարացի պատեց Դավիթի գլխում պապի խոսքերը. «...Մենք փրկված ժողովուրդ ենք՝ առանց ծիածան արյան անձրև տեսած, 1915 թվականին հայկական տարածքները ավելի շատ հարստացան կարմիր քարով, գիտե՞ս ինչու, նրանք ներկվեցին հայի արյունով, ամբողջ աքսորի ճանապարհին էր կարմիր...»: Դավիթը նայում էր Ռաբիայի հոր դիմանկարին, և նրա ճակատին նշմարվում էր «Յեղասպանություն» բառը, ու Դավիթի հայացքից նրա ունքերն ասես ավելի էին խստանում: Դավիթը հիշեց իր նախապապի նախամոր փրկության ճանապարհը, երբ նրա պապը թոռանը փրկելու համար նրան թաքցրել է կաթսայի մեջ ու պարաններով մեջքին կապած Վանից տեղափոխել է Էջմիածին: Կաթսան օգտագործվում էր մշտապես՝ տան մեջ նախամոր շունչը պահելու համար, և Դավիթը միշտ նայում էր, թե ինչպես էր տատը դրա մեջ մուրաբա, դոշափ և հարիսա պատրաստում: Հայի անցյալը երկաթյա շղթայի նման փաթաթվել էր Դավիթին, բայց Ռաբիայի կլոր աչքերը նրան ավելի արագ էին պտտում իրենց շուրջը, քան պապի շրջադարձային պատմությունները:

-Ես Դավիթն եմ, - հնչեց անվստահությունն իր ամբողջ մեծությամբ:

-Ինձ հետևելուց Դուք ավելի համարձակ էիք, - ասաց աղջիկը, և դրանից Դավիթն ավելի շփոթվեց, սակայն աղջկա հայացքից անկարող եղավ պահել ժպիտը իր նախահայրերից թաքուն: Նրանք վերածվեցին լուսավոր դիմանկարների, որ երբեք չէին նկարվելու:

...

Աշունը բացել էր իր օրորոցը նորեկ գույգերի համար ու տերևներով փաթաթում էր նրանց համաչափ քայլերը: Մերկացող ծառերն ասես ամաչում էին նրանց

ներկայությունից ու քամու սքողի տակ շրջում էին գլուխները: Աշնան գույները սագում էին նրանց միատարր դարձած պատկերին, որ հագել էր, թվում էր, անդիպչելի երջանկություն: Նրանք ամբողջացել էին ու ձուլվել միմյանց մտքերում: Բայց անցյալից եկող բողոքները խզբզում էին Դավիթի ներսը, թափվող տերևները ավելի էին ծանրացնում նրա ուսերին դրված բեռը: Նա իրեն մեղավոր էր զգում, ասես ինչ-որ հանցանք է գործել իր ազգի հանդեպ: Իրեն պատկերացնում էր ջարդերի ժամանակ անազգություն ու անտարբեր մի մարդ, ով կողքից դիտում է այդ ամենը և ոչինչ չի անում: Ամեն անգամ Ռաբիային ժպտալիս իր առաջ նախնիներին էր տեսնում, որ բացասական շարժում էին գլուխները: Շարժվող ժապավենով անցնում էին զոհերի նկարները, որ տեսել էր Ցեղասպանության թանգարանում: Իսկ աղջկա պատկերը օրեցօր ավելի լուսավոր էր դառնում, ու ժամանակը նրան արագորեն սուզում էր աղջկա աչքերի խորքերը:

-Ես հայ եմ, Ռաբիա, - ասաց Դավիթը, երբ նախնիների հերթական կանչը նորից խախտեց գույզի շուրջը պտտվող խաղաղությունը, և այդ խոսքերը արձագանքվեցին մերկացած այգում: Աղջիկը դանդաղորեն բաց թողեց Դավիթի ձեռքը, ու լռությունն իր մեջ քողարկեց այն երջանկությունը, որ հասցրել էր ներծծվել Ժնևյան օդում:

-Հիմա հասկանում եմ՝ ինչու չէիր խոսում քո երկրից: Հայրս պատմում էր մեր ազգերի մասին, ասում էր, որ պատերազմի ժամանակ շատ զոհեր են եղել, մինչդեռ ամբողջ աշխարհում խոսվում է Հայերի ցեղասպանության մասին, իսկ մեր դասագրքերում այդպես չէ ներկայացված պատմությունը:

-Կան փաստեր, նկարներ, օտարազգի ականատեսների և հայ փրկվածների վկայությունները, որոնցից Թուրքիայի կառավարությունը միշտ հեռու է պահում իր ժողովրդին:

-Մեզ մեծացրել են այլ մթնոլորտում, պատմությունն էլ գրում է, որ թուրք ժողովուրդն էլ է ջարդերի ենթարկվել: Հայրս կարող է համակերպվել, որ գլխաշոր չեմ կրում, բայց նա չափազանց ազգայնամոլ է, նա... նա... ճի՞շտ է, որ հայերը ատելությամբ են լցված մեր հանդեպ, - հազիվ արտաբերում էր աղջիկը՝ քիչ-քիչ հեռանալով Դավիթից:

-Ռաբիա, մենք ասելություն չունենք, մենք արդարություն ենք ուզում, որ Թուրքիան ընդունի իր նախնիների կողմից իրականացված ոճրագործությունը: Հայությունը բնաջնջվում էր թուրքերի կողմից, ընտանիքներով, երեխաներով, ծերերով ու կանանցով: Իսկ դու գիտե՞ս՝ ինչպես էին վարվում հղի կանանց հետ, գիտե՞ս: Նրանք թրով պատռում ու հանում էին պտուղը, կամ զցում էին նրանց ձորը: «Հայաստանն առանց հայերի»՝ դա էր նրանց նպատակը, հասկանո՞ւմ ես:

-Ես... ես չգիտեմ՝ ինչ ասեմ, ու անգամ եթե իմ ամբողջ ազգի կողմից ընդունեմ հայերի կորուստը, ոչինչ չի փոխվելու... իսկ մե՞նք, ի՞նչ է լինելու մեզ հետ, - հուսահատությունից Ռաբիայի աչքերն ավելի էին կլորացել, ու ինքն իր հարցի մեջ լուծում էր փնտրում:

-Դու մեղավոր չես նախնիներիդ հանցանքի մեջ, - ասում էր Դավիթը՝ ձեռքերում գրկած աղջկա դեմքը, - ուղղակի մենք իրավունք չունենք, հասկանո՞ւմ ես... ինչպես կուզեի փոխել ամեն ինչ..., - քիչ-քիչ ցածրացող ձայնով ասում էր Դավիթը՝ շոյելով աղջկա խոնավ աչքերը, իսկ նրա խոսքերի մեջ Ռաբիան մեղադրանք էր գտնում՝ հասկանալով, որ Դավիթը միշտ իր աչքերում հանցանք բառն է տեսնելու: Նա արդեն պատրաստ էր մոռանալու իր ծագումը, ջնջելու ճակատից կարմիր կետը, որն այդքան տեսանելի էր Դավիթի աչքին, բայց գիտեր, որ տղան պայքարին պատրաստ չէ, տեսնում էր նրա կոտրված թևերը, որոնք միայն թափահարելու համար էին և ոչ թռչելու: Ու անելանելիությունից նրանք վերածվեցին աշնան տերևների, որ շուտով քամուց քշվելու էին հեռու:

Ռաբիան հեռացավ կիսատ խոսքերը շուրթերին, նրա շողքն արդեն հեռվում էր երևում, իսկ Դավիթը կանգնած դեռ երկար նայում էր ծառերի միջից նշմարվող կետին ու զգում էր իր անկարողությունը իրականությունը փոխելու մեջ: Նա զայրույթից բռնել էր գլուխը ու արդեն լրջորեն երագում էր գերբնական ընդունակություն ունենալու մասին: Ու երկինքը միանգամից մթնեց, այգին արագացրեց գունաթափումը, ծառերը փրկություն գտան քամու մեջ, ու ամեն ինչ դարձավ սև, սպիտակ ու դատարկ:

Օրերն անցնում էին դանդաղ ու մրսած. արևը, կարծես, դիտավորյալ չէր ծագում ու պատսպարվելով ամպերի հետևում՝ ասես նեղացած Դավիթից դադարել էր տաքացնել

Ժնը: Սիրահարների այգին լռում էր անգորությունից ու, զգալով զույգին չպետքական իր գեղեցկությունը, զլանում էր պճնվել:

-What's up, bro?, - հարցրեց Լինգը, երբ օրերի դատարկությունը գրկած՝ Դավիթը իրեն «հավերժ» գամել էր անկողնում:

-Ոչինչ էլ չի պատահել, - հուսահատ պատասխանեց Դավիթը:

-Ok, հասկացա, նրան արդեն ասել ես:

-Ասել եմ:

-Եղբայր, գուցե ամեն ինչ հնարավոր է փոխել:

-Ինչպե՞ս, Լինգ, նա ազգությամբ թուրք է, հասկանո՞ւմ ես: Ընտանիքս չի համակերպվի, ժողովուրդս չի ընդունի, նախնիներս չեն ների:

-Ավետիսյան, ձեր ազգամիջյան խռովությունների պատճառով, դուք շատ բաներից ես գրկվում, - հանկարծ ասաց Սաշան, ով վաղուց հասկացել էր իրավիճակը՝ ամեն անգամ լսելով տղաների զրույցը:

-Սաշա, կարող ես գոնե մեկ անգամ սառնասրտությունդ թողնել սոցիալական կայքերումդ, - զայրացած ասաց Լինգը, ով այդպես էլ չէր կարողանում ընկերանալ Սաշայի հետ:

-Bro, ինչպես կասես դու, ես խառնվել չեմ ուզում ձեր խնդիրներին, - հեզանքով ասաց Սաշան, - բայց դարերի ընթացքում հայերն այդպես էլ լեզու չգտան թուրքերի հետ, և դրանից է հիմա այս վիճակը:

-Այո, ճիշտ նույն արտահայտությունը անում էին ձեր նախնիները ջարդերի ժամանակ, - անսպասելի դուրս թռան հեռվում պահած Դավիթի մտքերը, և նա վրդովված թռավ իր տեղից:

-Ռուսները միշտ եղել են հայերի կողքին, բայց սպանություններ եղել են երկու ազգերի միջև, երկուսն էլ կորուստներ են տվել, ու մենք միշտ ձգտել ենք հաշտեցնել ձեզ:

-Սաշա, իսկ ի՞նչ կասես Ցեղասպանությանը վերաբերող փաստաթղթերի, բազմաթիվ վկայությունների, հենց թուրք պետական գործիչների ու փրկված հայերի ցուցմունքների մասին: Դուք ոչինչ չգիտեք հայերի ջարդերի մասին, միայն լսել եք և այնքան, որքան ձեզ հետաքրքրել է: Տեսնում եմ՝ դու պատմություն չգիտես:

-Եղբայր, գործերիդ խառնվել չեմ ուզում, - ասաց Սաշան և դուրս եկավ սենյակից:

-Եվ ես դեռ շարունակում եմ զարմանալ նրա սառնության վրա, - ասաց Լինգը, - Իսկ ի՞նչ ես անելու, Դավիթ:

-Ոչինչ... սա է կնիքը մեր վրա դաջված, դարերի խորքից եկած, եթե մենք չհարգենք մեր ազգը, այդպես էլ կշարունակվի միշտ: Ռաբիան միակ լուսավոր կետն էր մեր ազգերի միջև, թվում էր նա կոչված է խաղաղություն բերելու պատմության մեջ, երանի այդպես լիներ, - հուսահատ ասաց Դավիթը և փամփուշտի պես դուրս թռավ սենյակից՝ վերջին անգամ տեսնելու իր լուսավոր կետը, ձուլվելու նրա՝ երկինքն արտացոլող աչքերի մեջ:

Անձրևը արդեն եկել էր սփռվելու հուսահատ գույգին և լվանալով քաղաքը՝ մաքրում էր նրանց տազնապն ու վախը, իսկ Դավիթը, կանգնած Ռաբիայի լույսի տակ, իր մեջ դաջում էր նրա հայացքը: Կաթիլները թափվում էին մազերի ծայրերով ու աչքերի հոսքի հետ խառնվելով՝ դառնում միագույն: Նրանք մտքերից ծանրացած կոպերի տակից նայում էին իրար ու զգում էին արգելքը դիպչելու՝ ասես դատվելու էին առանց ներման: Դավիթը մեկնեց ձեռքը աղջկա դեմքին ու չկարողացավ... Նրանք հեռացան անձրևի հետ միասին, ասես չէին էլ եղել, ու ժննը նրանց պարզապես հորինել էր: Խոնավ մտքերը, զրկված արևից, լավեցին օդում, հասան նախնիներին ու ասես ներում գտան ուշացած...

Իսկ պատմությունը մնում էր անտարբեր, ոչինչ չէր փոխվում. Թուրքիան շարունակում էր 1915 թվականը որակել՝ որպես «համընդհանուր ցավի» տարեթիվ, իսկ Ահմեդ Դավութողլուի հետևորդ վարչապետ Ալի Աջարը շարունակում էր իր նախնիների քարոզարշավը՝ «Օսմանյան կայսրության վերջին տարիները, անկախ կրոնից՝ թուրք, հայ, քուրդ, արաբ և այլ միլիոնավոր մարդկանց համար եղել են դժվարին ժամանակաշրջան: Թուրքիայի ամբողջ բնակչության՝ այդ թվում հայերի ցավը կիսելն ու նրանց հիշողությունները հասկանալը մեր մարդկային պարտքն է: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած դեպքերը բոլորիս համատեղ վիշտն է: Ուզում ենք, որ 20-րդ դարի սկզբին իրենց կյանքը կորցրած բոլոր հայերի հոգիները հանգչեն խաղաղությամբ, իսկ նրանց թոռներին հայտնում ենք մեր ցավակցությունը»...

Դավիթը վերադառնում էր հայրենիք՝ իր մեջ նախնիների ցավը ավելի արմատացրած, բայց անգամ նրանց հանդեպ պահած հավատարմության զգացողությունը ունակ չէր թաքցնելու նրա կորուստը: Ինքնաթիռի պատուհանից նա հաշվում էր գնալով փոքրացող պատկերները, որոնք որքան փոքրանում էին, այնքան նրա մտքերում մեծանում ու ավելի էին կլորանում Ռաբիայի աչքերը: Վերջին հանդիպումից նրանք այդպես էլ մնացել էին անսփոփ, խռոված, մարող մոմի պես անճար...

Մարիաննա Անանյան

Փետրվար, 2016թ.